# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 100

«03» 09 2020 թ. | ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Րաֆֆի Վորոնցովի Ասլանյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և նույն վարչության պետի պարտականությունների կատարումը նույն վարչության պետի տեղակալ Հայկ Ֆերդինանդի Էյրամջյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 02.09.2020թ. N 281-Ա և 282-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել Ր.Ասլանյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում, իսկ Հ.Էյրամջյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Աֆանդյան Արմեն - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Հակոբյան Մարատ - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ |

| | |
|---|---|
| Մարտիրոսյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Խալաթյան Նաիրա - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Բաղդասարյան Լևոն - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Հովսեփյան Մարո - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ |
| Գրիգորյան Մերի - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 20-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**